



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

27 մարտի 2018 թվականի թիվ 32-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի ներկայացրած որոշման նախագիծը, քվեարկության արդյունքներով 12 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի զարգացման 2018-2022 թվականների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.


8. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

9. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

10. ՂԱՐԻՔՅԱՆ Բ.

11. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.



Համայնքի ղեկավար  Ա. Սարգսյան



2018թ. մարտի 27
ք. Սիսիան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Սյունիքի մարզի Սիսիանի բազմաբնակավայր համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հանրային բաց լսումների վերաբերյալ»

Հանրային լսումները սկսվեց 2018 թվականի մարտի 23-ին ժամը 11⁰⁰-ին, համայնքապետարանի դահլիճում:

Հանրային լսումները արձանագրում է համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և սոցիալ տնտեսական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գասպարյանը:

Ներկա են համայնքում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ («Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի Սիսիանի քաղաքացիական կենտրոնի անդամ Ա. Հովհաննիսյանը, Համայնքների ֆինանսիստների միության փորձագետ Կ. Հովհաննեսյանը, Վոլո՛ Վիժն կազմակերպության աշխատակիցներ, Վոլո՛ Վիժնին կից շահերի պաշտպանության խմբի անդամներ), ավագանու անդամներ, վարչական ղեկավարներ, մի շարք կազմակերպությունների տնօրեններ, հաշվապահներ, այլ աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

Ողջունի խոսքով ներկաներին դիմեց համայնքի ղեկավար Ա. Սարգսյանը, հորդորելով ներկաներին՝ աշխատանքը ավելի արդյունավետ դարձնելու համար ակտիվ մասնակցություն ունենալ քննարկումների ընթացքում:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Իվանյանը ներկայացրեց համայնքի զարգացման ծրագիրը, որից հետո ներկաները իրենց հարցերը ուղղեցին համայնքի ղեկավարին:

Հարց . Արման Խաչատրյան - Վոլո՛ Վիժնին կից շահերի պաշտպանության խմբի անդամ
- Ինչպես եք պատրաստվում մեծացնել երիտասարդների մասնակցությունը համայնքային միջոցառումներին և որոշումների ընդունմանը:

Պատասխան. Վ. Իվանյան- համայնքի ղեկավարի տեղակալ.

- Հենց այն, որ դուք այսօր այստեղ եք և մասնակցում եք քննարկումներին, դա արդեն իսկ ներգրավվածության ապացույց է:

Պատասխան. Ա. Սարգսյան – համայնքի ղեկավար.

- Մենք պատրաստ ենք ցանկացած հարցում աջակցել երիտասարդներին: Շուտով համայնքում կազմակերպվելու է ծառատունկ, հրավիրում ենք երիտասարդներին:

Առաջարկություն. Արման Խաչատրյան - Վոլո՛ Վիժնին կից շահերի պաշտպանության խմբի անդամ

- Առաջարկում ենք ստեղծել համայնքապետարանին կից երիտասարդական խորհուրդ, որը կմեծացնի համայնքապետարան – երտասարդություն կապը.

Պատասխան Վ. Միրաբյան- աշխատակազմի քարտուղար.

- Երիտասարդական խորհուրդ կարող ենք ստեղծել :

Հարց. Վիկտորյա Խաչատրյան- Աշոտավան բնակավայրի բնակիչ.

- Մեր գյուղ գնացող հասարակական տրնսպորտ չկա, խնդրում ենք այդ հարցն էլ ներառել հնգամյա զարգացման ծրագրում:

Պատասխան. Ա. Սարգսյան- համայնքի ղեկավար.

- Նման խնդիրներ ունենք մի շարք բնակավայրերում: Կան երթուղիները, մարզպետարանը ամեն տարի անցկացնում է մրցույթ, սակայն մրցույթին մասնակցողներ չեն լինում, դրա համար էլ հանրային տրանսպորտը բացակայում է: Մենք նախաձեռնում ենք տարբեր գործնական քայլեր հիմնախնդիրը լուծելու համար:

Առաջարկ. Կ. Հովհաննեսյան- Համայնքների ֆինանսիստների միության փորձագետ.

- Հայաստանում զարգացման մեծ թափ է ստացել ՏՏ ոլորտը, մեր Սիսիանն էլ անմասն չի մնացել, աշխատանքներ են տարվում դպրոցներում, Վոլոյ Վիժնի կողմից, Մեծահասակների կրթության կենտրոնի կողմից, եթե այն դրվի համայնքի զարգացման հիմքում, մենք կարող ենք շատ ծրագրեր ունենալ: Հիմա, եթե դիմում ենք դոնորներին, նրանք միշտ կարևորում են ՏՏ ոլորտի ծրագրերի առկայությունը հնգամյա զարգացման ծրագրում:

Պատասխան. Վ. Իվանյան – համայնքի ղեկավարի տեղակալ.

- Շնորհակալություն առաջարկության համար, կձգտենք որոշակի փոփոխություններ կատարել: Եթե ունեք փաստաթղթավորված ծրագիր, խնդրում ենք ներկայացրեք, կփորձենք այն ընգրկել զարգացման ծրագրում:

Վերջում համայնքի ղեկավար Ա.Սարգսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին ակտիվ մասնակցության և առաջարկների համար:

Համայնքապետարանի աշխատակազմի



(Handwritten signature)

Վ. Միրաբյան

Արձանագրեց՝

Աշխատակազմի ֆինանսատնտեսական և սոցիալ տնտեսական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ՝

(Handwritten signature)

Ն. Գասպարյան

Ք. Սիսիան

23.03.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ


ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԻՍԻԱՆ 2018

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	9
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	17
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....	18
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	19
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....	20
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	21
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....	21
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	22
4. ՀԶՄ ֆինանսավորում.....	30
5. ՀԶՄ մոնիթորինգ.....	30



Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք
Հարգելի համաքաղաքացիներ,

Սիսիանի համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը այն կարևորագույն փաստաթուղթն է, որով սահմանվում են համայնքի զարգացման հեռանկարներն ու նպատակային ուղղությունները՝ հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի 2018-2022թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը՝ առկա հիմնախնդիրների վերահանման, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների գնահատման, ուժեղ և թույլ կողմերի վերլուծության արդյունքում, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունն ու հիմնական նպատակները:

Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված ու մասնակցային կառավարման մոդելը, որպես առավել արդյունավետ միջոց՝ հասնելու կայուն զարգացման:

Համայնքի զարգացման ծրագրի շահառուն Սիսիանի բազմաբնակավայր համայնքի յուրաքանչյուր բնակիչն է, գործարարը, հասարակական կազմակերպությունը:

Հարգելի՛ համաքաղաքացիներ, մեծապես կարևորում եմ մասնակցային կառավարումը և ակնակալում ձեր ներգրավվածությունը հասարակական գործընթացներում ու կառավարման մեջ: Լիահույս եմ, որ համայնքի բնակիչների և տեղական իշխանությունների միջև համագործակցության ու փոխազդեցության արդյունքում հնարավոր կլինի լուծել մեր առջև ծառայած խնդիրները և հասնել համընդհանուր բարեկեցության:

Հարգանքով՝

Համայնքի ղեկավար՝

Արթուր Սարգսյան


1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Սիսիան բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-93-Ն օրենքի համաձայն, Սիսիանի տարածաշրջանի 30 համայնքների միավորման արդյունքում, տարածքը կազմում է 123384 հա (Գծապատկեր 1):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունները ստանձնել են 2017 թվականի նոյեմբերի 13-ից:

Գծապատկեր 1. Սիսիանի համայնքի վարչական տարածքը ըստ առանձին բնակավայրերի, հա



Աղյուսակ 1.Սիսիանի համայնքի տեղադրվածությունը ըստ բնակավայրերի

h/h	Համայնքը և բնակավայրերը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Հեռ. Սիսիանից /կմ/	Հեռ. Երևանից /կմ/	Հեռ. Կապանից /կմ/	Ս Ս Բ Լ	Սահմանամերձ (ՀՀ կառ. որոշում N713 17-11-1998թ.)	Լեռնային (ՀՀ կառ. որոշում N756 27-11-1998թ.)	Բարձր լեռնային (ՀՀ կառ. որոշում N756 27-11-1998թ.)
1	Սիսիան	1600		210	104				
2	Ախլաթյան	1750	14	224	118	Լ			
3	Աղիտու	1650	7	217	111				
4	Անգեղակոթ	1840	15	239	104	Լ			
5	Աշոտավան	1750	7	218	112	Լ			
6	Արևիս	1950	20	231	125	ՍԼ			
7	Բալաք	1700	23	246	126	Լ			
8	Բնունիս	1830	12	223	117	Լ			
9	Բռնակոթ	1700	7	217	111	Լ			
10	Գետաթաղ	1470	24	238	132				
11	Դաստակերտ	1920	20	234	124	Լ			
12	Դարբաս	1500	23	235	129				
13	Թանահատ	1920	19	229	123	ՍԲԼ			
14	Թափկ	1740	12	223	117	ՍԼ			
15	Իշխանասար	1900	6	206	101	Լ			
16	Լծեն	1560	23	234	128				
17	Լոր	1680	26	240	134				
18	Հացավան	1730	10	221	115	Լ			
19	Մուցք	1870	26	251	130	ՍԼ			
20	Նժդեհ	2015	22	238	128	ՍԲԼ			
21	Նորավան	1700	10	222	99	Լ			
22	Շաղատ	1760	21	246	123	ՍԼ			
23	Շաքի	1720	7	204	98	Լ			
24	Շենթաղ	1760	30	245	139	Լ			
25	Որոտնավան	1450	14	226	120				
26	Սալվարդ	1940	19	244	129	ՍԼ			
27	Վաղատին	1580	13	224	112				
28	Տոլորս	1720	8	218	112	Լ			
29	Տորունիք	1840	17	227	121	Լ			
30	Ույծ	1600	3	215	101				

ՀՀ անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տվյալների համաձայն 2017 թվականի դրությամբ Սիսիանի համայնքի բնակչությունը կազմում է 30922 մարդ, որից տղամարդիկ՝ 51%, կանայք՝ 49%: Բնակչության 52% -ը հաշվառված է Սիսիանում:

Աղյուսակ 2. Սիսիան համայնքի ժողովրդագրական ցուցանիշները ըստ առանձին բնակավայրերի, մարդ, 2017թ.

h/h	Բնակավայրի անվանումը	Բնակչությունը	Տղամարդիկ	Կանայք	մինչև 1 տարեկան	1-2	3-4	5-6	7-10	11-14	15-17	18-22	23-45	46-62	63 և ավելի
1	Սիսիան	16151	8086	8065	178	391	411	443	911	741	507	1076	5859	3575	2059
2	Ախլաթյան	572	289	283	5	16	17	14	22	20	18	45	207	137	71
3	Աղիտու	397	217	180	2	5	10	10	18	16	19	40	141	79	57
4	Անգեղակոթ	1667	872	795	10	41	37	37	103	78	64	165	574	364	194
5	Աշոտավան	648	339	309	3	16	21	15	34	29	19	52	241	136	82
6	Արևիս	101	54	47	2	1	3	1	7	9	3	13	33	18	11
7	Բալաթ	169	95	74	1	5	4	2	7	7	3	23	58	43	15
8	Բնունիս	169	85	84		4	1	2	10	3	2	18	62	40	28
9	Բունակոթ	2065	1093	972	37	54	53	47	92	108	61	142	720	497	253
10	Գետաթաղ	188	105	83	2	8	8	7	2	7	3	16	68	46	21
11	Դաստակերտ	272	139	133	1	4	5	6	16	12	6	22	91	59	45
12	Դարաբաս	1146	603	543	11	24	19	29	44	52	49	108	398	225	192
13	Թանահատ	42	28	14						1		5	15	16	5
14	Թափիկ	291	145	146	1	11	8	5	13	17	7	22	91	74	42
15	Իշխանասար	275	150	125	4	12	14	8	19	14	5	20	107	55	17
16	Լձեն	112	57	55	1	6	4	1	4	5	1	7	24	26	33
17	Լոր	317	160	157	1	1	6	2	15	19	14	32	90	84	53
18	Հացավան	273	143	130	2	4	9	2	14	12	14	19	103	63	31
19	Մուցք	311	170	141	2	9	5	8	16	9	12	17	106	80	47
20	Նժդեհ	193	95	98	2	1	5	8	11	12	10	12	60	44	28
21	Նորավան	467	236	231	4	15	20	21	19	31	14	29	167	101	46
22	Շաղատ	1019	522	497	18	30	34	28	69	64	31	74	362	216	93
23	Շաքի	1310	707	603	9	27	28	27	67	62	52	133	486	277	143
24	Շենաթաղ	346	180	166	5	14	7	7	14	19	7	21	118	79	55
25	Որոտնավան	311	163	148	5	5	11	10	16	11	9	27	98	70	49
26	Ույծ	545	284	261	6	13	13	22	35	24	19	41	182	136	54
27	Սարվարդ	313	173	140	3	5	4	4	8	10	10	43	99	85	42
28	Վաղատին	692	367	325	8	24	20	14	25	26	25	64	264	148	74
29	Տոլորս	424	225	199	8	18	15	9	27	13	13	14	158	98	51
30	Տորունիք	136	72	64	2	1		3	8	2	3	10	50	40	17
	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔ	30922	15854	15068	333	765	792	792	1646	1433	1000	2310	11032	6911	3908

Աղյուսակ 3. Միսիանի համայնքի հողային և այլ բնական ռեսուրսները ըստ առանձին բնակավայրերի, հա

h/ h	Համայնքը և բնակավայրերը	Ընդամեն Հողերը, հա	Ընդամենը գյուղ. Նշ	Գյուղատնտեսական, հա					Բնակավայրերի հողեր	Արդյունաբերության, ընդերքագտաբերական և այլ արտադրական նշանակության	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	հատուկ պահպանվող տարածքների հողեր	զբաղյին հողեր	անտառային հողեր	հատուկ նշանակության հողեր
				վարելահող	բազմամյա տնկարկ	խոտհարք	արոտ	Այլ հողատեսք							
1	Միսիան	3322	1787	914	17		286	570	706	50	18	94	36	598	33
2	Դաստակերտ	4205	4138	35		17	2233	1853	54	0	3	1	8		
3	Ախլաթյան	3518	3439	747	1	42	1456	1193	57	5	4	6	7		
4	Աղիտու	5934	5705	744		211	4049	702	55	3	21	8	28		114
5	Անգեղակոթ	9851	9244	1513	12	2	2560	5157	292	17	17	33	75	173	
6	Աշոտավան	1229	899	432			377	91	52	10	1	10	163	94	
7	Արևիս	5856	3138	136		114	1710	1178	19	1757	3	18	41	880	
8	Բալաք	1030	931	452		24	196	258	35	1	0	1	55	7	
9	Բնունիս	3660	3598	446		51	2153	948	40	1	2	11	8		
10	Բոնակոթ	7281	6781	182 2		199	3218	1542	276	23	3	9	22	166	
11	Գետաթաղ	1312	1036	35	7		888	106	27	3	1	13	2	229	
12	Դարբաս	2743	2227	670	48		867	643	113	9	11	4	108	271	
13	Թանահատ	1751	1724	115		8	777	824	14	4	5		4		
14	Թասիկ	4051	3862	383		184	2842	453	60	3	3	38	29	58	
15	Իշխանասար	3653	3589	764		20	1662	1142	40	9	3	7	5		
16	Լծեն	1615	1375	248			549	578	23	1	2	7	7	200	
17	Լոր	3360	3264	134	2	10	2005	1113	32	2	4	4	4	50	
18	Հացավան	796	738	356			141	242	36	4	3	11	4		
19	Մուցք	4638	4493	848		271	2571	803	67	2		1	5	69	1
20	Նժդեհ	5521	5455	357	21	205	3206	1666	43	5	0	0	17		
21	Նորավան	4144	4038	708		100	2361	869	61	26	8	3	1		7
22	Շաղատ	11181	10576	983		199	7255	2138	107	8	24	38	31	398	
23	Շաքի	7400	7154	137 0	3	45	2514	3222	91	62	17	4	18	53	1
24	Շենաթաղ	7404	6998	143		69	3694	3092	32	5	7	209	20	134	
25	Որոտնավան	1812	1595	353	25		699	518	56	6	18	19	9	109	
26	Սալվարդ	4253	4064	565		164	2777	558	72	90	0	1	25		
27	Վաղատին	3985	3883	828	26	28	1945	1056	53	15	10	21	3		
28	Տոլորս	2858	2407	607			1378	422	34	4	23	1	185	204	

29	Տոբունիք	1759	1717	158	9	59	995	496	25	7	3	6	1		
30	Ույծ	3262	2573	1151	12		641	769	136	24	6	27	29	418	49
	ԸՆԴԱՄԵՆԸ	123384	112427	18017	183	2022	58004	34202	2708	2156	222	605	951	4110	206

Տեղական ինքնակառավարման մարմինները

Սիսիանի համայնքում 2017թ. նոյեմբերի 5-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում Սիսիանի բազմաբնակավայր համանքի ղեկավար է ընտրվել Արթուր Սարգսյանը և ձևավորվել է 15 անդամից բաղկացած ավագանու կազմ:

Համայնքային ենթակայության կա 13 կազմակերպություն:


Աղյուսակ 4. Սիսիան համայնքապետարանի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թիվը

N	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՇԽԱՏԱԿ ԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ
1	ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ	119
2	“ՍԻՍԻԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ” ՀՈԱԿ	50
3	“ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ,Զ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ” ՀՈԱԿ	18
4	“ԱՂՎԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ” ՀՈԱԿ	20
5	“ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ” ՀՈԱԿ	26
6	“ՍԻՍԻԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ” ՀՈԱԿ	32
7	“ՍԻՍԻԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ” ՀՈԱԿ	15
8	“ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑ” ՀՈԱԿ-Ի	9
9	“ՍԻՍԻԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԴՊՐՈՑ” ՀՈԱԿ	8
10	“ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՆՈՒՀ” ՀՈԱԿ	48
11	“ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՆՈՒՀ” ՀՈԱԿ	42
12	“ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՆՈՒՀ” ՀՈԱԿ	43
13	“ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ՆՈՒՀ” ՀՈԱԿ	39
14	ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ	16
	ԸՆԴԱՄԵՆԸ	485


1.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Միսիանի համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 954մլն363 հազ.դրամ, սեփական եկամուտները ընդհանուր եկամուտների մեջ կազմում է 33% (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Միսիանի համայնքի 2018թ. բյուջեի եկամտային մաս



Գծապարկեր 3. Սիսիանի համայնքի 2018թ. բյուջեի ծախսային մասը ըստ գործառնական դասակարգմամբ



Համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները և արդյունաբերական արտադրանքը (հիմնականում քաղաքային բնակավայրերի համար), հիմնական սպառման շուկաներ.

Սիսիանի համայնքում տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև սննդամթերքի և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունները: Համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը, որտեղ գերակշռող ծավալը բաժին է ընկնում անասնապահությանը, հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի աճեցմանը:

- Էլեկտրաէներգիա արտադրություն փոքր ՀԷԿ-երի միջոցով
- Քարի արտահանում և վերամշակում
- Կաթի և կաթնամթերքի արտադրություն
- Հացի և հացաբուլկեղենի արտադրություն
- Զովացուցիչ ըմպելիքների և պահածոների արտադրություն

Ծառայությունների ոլորտի համայնքի հիմնական ձեռնարկությունները և հիմնական ծառայությունները.

- Հյուրանոցային ծառայություններ
- Փաստաբանական ծառայություններ
- Նոտարական և թարգմանչական ծառայություններ
- Խորհրդատվական ծառայություն

Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, հիմնական սպառման շուկաներ

Սիսիանի տարածաշրջանը հանրապետությունում հայտնի է եղել հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի և անասնապահական մթերքների արտադրությամբ, որը գերակշիռ դեր ուներ հանրապետությունում: Բնակչության շուրջ 80% զբաղվում է գյուղատնտեսությամբ, բնակչության կողմից մշակվող հողատարածքների չափերը տարբեր են՝ սկսած 100քմ փոքրիկ հողակտորներից, մինչև 25-30հա: Հիմնական մշակաբույսերն են ցորեն, գարի, հաճար, կարտոֆիլ, կաղամբ և այլ բանջարաբոստանային կուլտուրաներ: Գյուղատնտեսության զարգացման և հողերի արդյունավետ մշակության գործում լուրջ խոչընդոտ է հողերի մասնատվածությունը, որը ավելի ծախսատար և աշխատատար է դարձնում գյուղատնտեսությունը: Քաղաքում գյուղմթերքների վաճառքի շուկայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում ֆերմերային տնտեսությունների արտադրանքի սպառման վրա: Համայնքում անասնապահությամբ զբաղվող տնտեսությունները ունեն 14374 գլուխ խոշոր եղջերավոր և 21156 գլուխ մանր եղջերավոր անասուն, 33537 թև թռչուն:

Աղյուսակ 5. Սիսիանի համայնքի հաշվառված անասնագլխաքանակը, թռչունները և մեղվաընտանիքները ըստ առանձին բնակավայրերի

h/h	Բնակավայրի անվանումը	խոշոր եղջերավոր	մանր եղջերավոր	թռչուն	մեղվաընտանիք
1	Անգեղակոթ	1295	2498	2554	172
2	Աշոտավան	267	383	1460	200
3	Ախլաթյան	557	622	752	279
4	Աղիտու	144	167	595	99
5	Արևիս	100		210	263
6	Բոնակոթ	2698	2200	2164	1200
7	Բալաք	303	337	473	304
8	Բնունիս	281	215	678	193
9	Գետաթաղ	172		148	52

10	Դարբաս	622	237	2348	498
11	Թափկ	422	285	1177	345
12	Թանահատ	38	60	200	80
13	Լոր	236	352	483	522
14	Լծեն	40	40	225	262
15	Հացավան	237	172	2087	267
16	Իշխանասար	197	704	419	371
17	Մուցք	435	1075	760	222
18	Նժդեհ	339	71	164	232
19	Նորավան	389	580	927	308
20	Շաքի	1228	2469	3658	1000
21	Շաղատ	1162	2043	2203	1292
22	Շենաթաղ	476	589	285	566
23	Որոտան	194	132	274	175
24	Սալվարդ	420	1160	596	576
25	Վաղատին	394	472	1561	541
26	Տոլորս	266	1420	815	94
27	Տորունիք	188	182	145	189
28	Ույծ	333	584	1102	288
29	Ք.Դաստակերտ	90	111	68	400
30	Ք.Սիսիան	851	1996	5006	4041
	ԸՆԴԱՄԵՆԸ	14374	21156	33537	15031

Կաթի վերամշակմամբ զբաղվող փոքր արտադրամասերը տեղական հումքի վրա արտադրում են պանիր, թթվասեր, մածոն, կաթնաշոռ և այլն:

Աղյուսակ 6. Միսիանի համայնքի գյուղատնտեսական արտադրանքները և ծավալները ըստ բնակավայրերի, 2017թ.

h/h	Համայնքի և բնակավայրի անվանումը	Հացահատիկ		բանջարեղեն		Կարտոֆիլ		Պտղատու	
		հա	ցենտ	հա	ցենտ	հա	ցենտ	հա	ցենտ
1	Միսիան	706	11224	57,5	10500	105	19950	42,58	3245
2	Ախլաթյան	97,2	1295	2,1	385	6,4	975	8,1	174
3	Աղիտու	656,8	13138	3,9	660	7	900	20,3	131
4	Անգեղակոթ	848	6770	16	2500	55	8400	60,9	100
5	Աշոտավան	309	2242	6	1500	13	2470	10,5	1020
6	Արևիս	30,2	122	1	120	2	200	0,8	10
7	Բալաք	61,7	86	6	500	15	1150	2	
8	Բնունիս	147,2	1206	1,7	410	2	420	12,6	446
9	Բոնակոթ	705	5640	78	18000	139	25100	50,1	1540
10	Գետաթաղ	23	162	2,3	120	6	480	21	384
11	Դաստակերտ	1	15	0,8	130	3	450	1,2	10
12	Դարբաս	347,3	4672	26	6000	35,5	5120	81	2010
13	Թանահատ	10,5	188	1,5	210	1	160	1,2	7
14	Թասիկ	53	410	8,7	1050	13,5	1900	6,1	245
15	Իշխանասար	356	5092	4		5	700	2	38
16	Լծեն	58,5	577	2,5	280	6	850	10,3	390
17	Լոր	12	120	3	240	9	1350	29,6	830
18	Հացավան	120,2	1353	4,9	1400	14	3360	7	34
19	Մուծք	136	1296	3	530	16	1600	0,3	2
20	Նժդեհ	27	230	4,5	680	6	1200	16,6	10
21	Նորավան	441,4	7524	6,2	1200	8	1600	16	585
22	Շաղաթ	141	1619	12	2000	50	7500	20,2	150
23	Շաքի	664	8687	15	4400	28	5600	24,86	2107
24	Շենաթաղ	1	15	1,2	220	17	2250	9,6	926
25	Որոտան	147,7	2265	4,8	450	15	1800	49,7	487
26	Ույծ	650,1	7164	5,37	750	12	2000	29,2	637
27	Սալվարդ	91	738	3,6	700	10	1300	14,4	561
28	Վաղատին	527	8220	10	1500	17	3700	49,9	653
29	Տոլորս	132	1310	5,3	860	10	2000	19,2	224
30	Տորունիք	17,3	481	1,3	200	2,6	90	21	
	Ընդամենը	7518,1	93861	298,17	57495	629	104575	638,24	16956

Ձրոսաշրջային հեղափոխություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ.

Սիսիանի տարածաշրջանը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնք տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի (Ք.Ա. 5-1 հազարամյակներից մինչև 21-րդ դար): Պատմամշակութային հուշարձանների մեջ ճանաչվածներից են՝ Ջորաց քարերի հնագույն աստղադիտարանը, Որոտնավանքը, Որոտնաբերդը, Թանահատի վանքը, Աղիտուի հուշարձանը, Սիսիանի նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Ուխտասարը: Բնության հուշարձաններից են Շաքիի ջրվեժը (18 մ)՝ Փոքր Կովկասի ամենաբարձր ջրվեժը՝ Համայնքի տարածքում կառուցված 7-րդ դարի Սրբ.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իր տեղադրությամբ դոմինանտային դիրք է գրավում քաղաքի հատակագծային կառուցվածքում և ունի ընկալման գրեթե հավասարազոր հնարավորություններ քաղաքի գրեթե բոլոր կետերից: Սիսիանի պատմության թանգարանում պահպանվում են տարածաշրջանի հնագիտական պեղումների արդյունքների նմուշները:

Դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ. ԲՈՒՀ-եր.

Համայնքում գործում է 1 ավագ, 15 հիմնական, 15 միջնակարգ և 1 տարրական դպրոցներ, 6 արտադպրոցական հաստատություններ, 4 նախակրթարաններ, ՀԱԱՀ-ի մասնաճյուղ, 1 քոլեջ և 1 աջակցման կենտրոն::

Դպրոցներում սովորում են 3009 աշակերտ: Բոլոր դպրոցները միասին ունեն 897 աշխատատեղ: Համայնքային ենթակայության 4 նախադպրոցական հաստատություններում և գյուղական բնակավայրերում գործող նախակրթարաններում ընդգրկված են 826 երեխաներ: Նախակրթարաններն ունեն 172 աշխատատեղ: Համայնքի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկները հիմնականում ապահովված են մասնագիտական կադրերով, որոնց շնորհիվ հաջողվել է պահպանել այդ հիմնարկների աշխատանքային ռիթմը: Սիսիանում գործող նախակրթարանները ապահովված են տիպային շենքերով, ջրով, էլեկտրաէներգիայով, կանոնավոր կատարվում է աղբահանություն: Գյուղական բնակավայրերում գործող նախակրթարանները ունեն մասնակի վերանորոգման խնդիրներ:

Սիսիանի համայնքում Համո Սահյանի անվան քաղաքային մշակույթի տունը հիմնանորոգվել է 2010թ. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի աջակցությամբ: Որոշ բանակավայրերում մշակույթի տները գտնվում են անբարեկարգ վիճակում: Գրադարանն ունի 120256 անուն գիրք, 3708 ընթերցող: Համայնքի գրադարանի գրապահոցները անմխիթար վիճակում են, համալրման ենթակա գրքերի կարիք կա: Ներքին հարդարման աշխատանքների, լուսամուտների և դռների նորոգման և փոփոխման կարիք կա:

Համայնքային ենթակայության գործում է ֆուտբոլի դպրոց, շախմատի դպրոց: Շախմատի դպրոցում ընդգրկված են 105 սաներ, ովքեր տարբեր մրցաշարերում մշտապես մրցանակային տեղեր են զբաղեցրել: Դպրոցի շենքը ենթակա է նորոգման: Ֆուտբոլի դպրոցում ընդգրկված են 48 սաներ: 2017 թվականին ՈՒԵՖԱ-ի և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի աջակցությամբ կառուցվեց ֆուտբոլի դպրոցի հանդերձարանը և արհեստական խոտածածկով մարզադաշտը:

Համայնքն ունի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, որտեղ գործում են մի շարք խմբակներ (խոհարար-հրուշակագործի, խոհարար-դիզայների, գեղանկարչության, փայտի գեղարվեստական մշակման, գորելենի, համակարգչային ուսուցման, վարսահարդարների, մատնահարդարների, դիմահարդարների, հելունագործության, ոլունքագործության, դեկորացիաների ձևավորման, ասմունքի) և հաճախում է 180 երեխա, աշխատողների թիվը՝ 20:

Համայնքի երաժշտական դպրոցում գործում են դաշնամուրի, լարային, փողային և ժողգործիքների բաժինները: Դպրոց են հաճախում 170 սան, աշխատակիցների թիվը 32: Համայնքի պարարվեստի դպրոցում սովորում են 74 սան: Դպրոցի շենքը հիմնական նորոգման կարիք ունի, ուսումնական պայմանները բավարար չեն արդյունավետ ուսուցման համար:

2. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոցը հիմնովին նորոգված և ջեռուցված է, սաների թիվը 73 է, աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 18:

Գյուղական բնակավայրերում արտադպրոցական կրթություն գրեթե չի իրականացվում:

Առողջապահական հաստատություններ

Համայնքում կա 1 հիվանդանոց, որը նախատեսված է 50 հիվանդի համար, աշխատողների թիվը կազմում է 156 մարդ և զինվորական հոսպիտալ Աղիտու բնակավայրում, որտեղ աշխատողների թիվը կազմում է 123 մարդ: Գյուղական բնակավայրերում գործում են բուժկետերը, որոնց մի մասը ենթակա են շենքային պայմանների բարելավման: Համայնքում գործում է 5 ատամնաբուժական կենտրոններ, որտեղ աշխատողների թիվը կազմում է 13 և 5 դեղատներ:

Աղյուսակ 7. Սիսիանի համայնքում գործող առողջապահական հաստատությունները և աշխատակիցների թիվը ըստ բնակավայրերի

h/h	Համայնք/բնակավայր	Հաստատության անվանումը	աշխատողների թիվը, մարդ
1	Սիսիան	<<Սիսիանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ	156
2	Ախլաթյան	բուժկետ	1
3	Աղիտու	բուժկետ, զինվորական հոսպիտալ	1
4	Անգեղակոթ	բուժամբուլատորիա	10
5	Աշոտավան	բուժկետ	1
6	Արևիս	բուժկետ	1
7	Բալաք	բուժկետ	1
8	Բնունիս	բուժկետ	1
9	Բոնակոթ	<<Բոնակոթի առողջության առաջնային պահպանման>> ՊՈԱԿ	10
10	Գետաթաղ	բուժկետ	1
11	Դաստակերտ	բուժամբուլատորիա	1
12	Դարբաս	<<Դարբաս ԱԿ>>	6
13	Թանահատ	'-	'-
14	Թասիկ	բուժամբուլատորիա	1
15	Իշխանասար	բուժկետ	1
16	Լձեն		

17	Լոր	բուժկետ	1
18	Հացավան	բուժամբուլատորիա	1
19	Մուցք		
20	Նժդեհ		
21	Նորավան	բուժկետ	1
22	Շաղատ	բուժամբուլատորիա	1
23	Շաքի	բուժկետ	1
24	Շենաթաղ	բուժկետ	1
25	Որոտնավան	բուժկետ	1
26	Ույծ	բուժկետ	1
27	Սալվարդ	բուժկետ	1
28	Վաղատին	բուժկետ	1
29	Տոլորս	բուժկետ	1
30	Տորունիք	բուժկետ	1

Ֆինանսավարկային հաստատություններ

Համայնքում գործում է «ՎՏԲ», «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ», «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ», «ԱՐԱՐԱՏ» բանկերի մասնաճյուղերը և 6 ֆինանսավարկային կազմակերպություններ:

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

Ըստ ՍԱՏԳ-ի տրամադրված տվյալների 2017 թվականի դրությամբ Սիսիանի համայնքում ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված են 755 ընտանիք, նպաստ ստացողների թիվը՝ 598: Միակողմանի ծնողազուրկ 123 երեխա, երկկողմանի ծնողազուրկ 2 երեխա:

Ջրաղվածության մակարդակը (քաղաքային համայնքներում):

Ըստ Սիսիանի զբաղվածության կենտրոնի կողմից տրամադրված տվյալների 2017 թվականի դրությամբ գրանցված գործազուրկների թիվը կազմում է 955 մարդ, որից կանայք՝ 641, տղամարդիկ՝ 314: Ջրաղվաժների թիվը կազմում է 3189 մարդ:

1.3. Համայնքում իրականացվող ծրագրեր

Հ/Հ	Նախատեսվող ծրագրի անվանումը
1.	Սիսիանի թիվ 1 և 4, Տոլորս բնակավայրերի նախակրթարանների վերանորոգում և գույքի ձեռքբերում գյուղական բնակավայրերի նախակրթարանների վերանորոգում
2.	Շամբ-Շենաթաղ ճանապարհի ասֆալտապատում
3.	Արոտավայրերի ջրախմոցների տեղադրում
4.	Կոմունալ տնտեսության գործունեության բարելավում
5.	Համայնքի բարեկարգում /կանգառների կառուցում, տանիքների վերանորոգում,
6.	Քնունիս բնակավայրում լուսավորության անցկացում
7.	Համայնքի աղբավայրի ցանկապատում
8.	Տոլորս Թասիկ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի բարելավում
9.	Ներհամայնքային ճանապարհների բարելավման ծրագիր
10.	Կարեն Դեմիրճյանի անվան այգու բարեկարգման ծրագիր
11.	<<Համապարփակ աջակցություն Հայաստանի լեռնային գյուղական շրջանների կայուն տնտեսական զարգացման>> ծրագրեր են իրականացվում համայնքի Շաքի, Շաղատ և Անգեղակոթ բնակավայրերում՝ <<Շեն>> բարեգործական կազմակերպության և համայնքի համաֆինանսավորմամբ
12.	<<Համայնքի գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի շրջանակներում Աղիտու, Լոր, Նժդեհ, Իշխանասար, Նորավան բնակավայրերում իրականացում են <<Համայնքի արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ>> բաղադրիչը:
13.	<<Համայնքի գերեզմանատների բարեկարգում>> ծրագիր
14.	Գյուղատնտեսական տեխնիկայի պարկի ստեղծում
15.	Ջերմոցային տնտեսությունների զարգացում
16.	Տուրիստական կենտրոնի ստեղծում

Սիսիանի համայնքը 2017 թվականից անդամագրվել է ԵՄ-ի կողմից հայտարարված <<Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման>> նախաձեռնությանը, որի նպատակն է համայնքում ապահովել տնտեսական աճ՝ մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների և հանրային հատվածի հետ համագործակցության արդյունքում ստեղծել աշխատատեղեր:

1.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի սեփական եկամուտներից և համահարթեցման սկզբունքով պետական բյուջեից տրամադրվող դոտացիայից: 2018-2022թթ. համայնքի բյուջեի եկամուտները կանխատեսելու նպատակով ներկայացնում ենք նախորդ տարիների եկամտային փաստացի ցուցանիշները ըստ առանձին եկամտատեսակների:

Համայնքի զարգացման ծրագրով նախատեսված կոնկրետ ծրագրերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է համագործակցել ՀՀ-ում գործող տարբեր հիմնադրամների և միջազգային կազմակերպությունների հետ, իսկ համայնքային բյուջեում կնախատեսվեն համայնքի ներդրումները:

Աղյուսակ 6. Համայնքի եկամուտների կանխատեսումները

h/h	Եկամտատեսակ	2017 փաստ	2018 նախ	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ	2022 կանխ
1	ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ	86056.758	79545.0	83522.3	91874.5	101061.9	111168.1
2	ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ	59506.741	71000.0	74550.0	82005.0	90205.5	99226.1
3	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	16003.805	15634.8	16416.5	18058.2	19864.0	21850.4
4	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	4222.7	4400.0	4620.0	5082.0	5590.2	6149.2
5	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	551522.4	625526.7	656803.0	722483.3	794731.7	874204.8
6	ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	40846.841	45424.0	47695.2	52464.7	57711.2	63482.3
7	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	68401.418	113032.1	118683.7	130552.1	143607.3	157968.0
	ՈՆԵՐՈՒՄՆԵՐ	826560.663	954562.6	1002290.7	1102519.8	1212771.8	1334049.0

1.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Սիսիանի համայնքի կայուն զարգացման առջև ներկայումս ծառայած խոչընդոտներն ու դժվարություններն են՝ ըստ հետևյալ ուղղությունների.

- 1) Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում – ներդրողների համար ոչ գրավիչ միջավայրը, սպառման շուկաների անհասանելիությունը:
- 2) Համայնքի գույքի կառավարումը – գյուղ. նշանակության հողերի մասնատվածությունը:
- 3) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը – առկա նախակրթարանների ծանրաբեռնվածություն, նոր նախակրթարանի կառուցման անհրաժեշտություն, գույքի ձեռք բերում, դաստիարակների վերապատրաստում:
- 4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ – ֆինանսական միջոցների սղությունը:
- 5) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը – ֆինանսական միջոցների սղությունը, աշխատատեղերի բացակայությունը, բնակչության իրազեկվածությունը:
- 6) Տիգրիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը – համայնքում խաղահրապարակների և մարզագույքի պակաս:
- 7) Համայնքում բնակարանային շինարարության խթանումը – բնակչության ցածր եկամուտների պատճառով հնարավորություն չի եղել սեփականության իրավունքով հատկացված տնամերձ հողամասերը կառուցապատել,
- 8) Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը – ֆինանսական միջոցների սղությունը:
- 9) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը – ֆինանսական միջոցների սղությունը:
- 10) Պետության պաշտպանության իրականացման աջակցումը – արտագաղթը:
- 11) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը – բնակչության իրազեկվածություն:
- 12) Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը – մասնատված հողակտորները, ոռոգման ցանցի բացակայություն:
- 13) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը – գետի մաքրման համար ֆինանսական միջոցների սղությունը:
- 14) Զբոսաշրջության զարգացման խթանումը – զբոսաշրջային ենթակառուցվածքների բացակայությունը, սպասարկման ծառայությունների միջև առողջ մրցակցության բացակայություն:
- 15) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում – ֆինանսական միջոցների սղությունը:
- 16) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը – բնակարանային պայմանները, սոցիալական վատ վիճակը, գործազրկությունը:

- 17) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը – արդի բժշկական սարքավորումների պակասը:
- 18) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը – հաշմանդամների համար ոչ հարմար միջավայր, կարծրատիպեր:
- 19) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը – բնակչության ոչ իրազեկվածությունը:
- 20) Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով – ոչ գրավիչ միջավայր:

1.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> ▪ Բարենպաստ կլիմայական պայմաններ ▪ Էկոլոգիական վտանգ ներկայացնող խոշոր ձեռնարկությունների բացակայություն և համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքների էկոլոգիապես մաքուր որակ: ▪ Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողեր, ալպիական արոտավայրեր՝ գյուղատնտեսության և անասնապահության զարգացման համար: ▪ Կրթական, մշակութային, առողջապահական հաստատությունների առկայություն ▪ Առկա ինժեներական լաբորատորիաներ ▪ Անխափան գործող ֆիքսված հեռախոսակապ, բջջային հեռախոսակապ՝ «Վիվասել-USU», «Յուլթոմ» և «Բիլայն» շարժական կապի և ինտերնետ ծառայություններ: ▪ 10 հեռուստաալիքների և կաբելային հեռուստատեսության հեռարձակում: ▪ Զբոսաշրջության զարգացման նախադրյալներ /գրավիչ պատմամշակութային հարուստ ժառանգության, բնության հուշարձաններ և օբյեկտներ/: 	<ul style="list-style-type: none"> ▪ Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, մարզկենտրոն Կապանից և միջպետական մայրուղուց: ▪ Որոշ հատվածներում անբարեկարգ փողոցներ և մայթեր: ▪ Դաշտամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակ ▪ Որոշ բազմաբնակարան շենքերի անբարեկարգ տանիքներ և բակային հատվածներ: ▪ Վթարային շենքի առկայություն: ▪ Անբարեկարգ ոռոգման ցանցեր: ▪ Սակավ և անբարեկարգ խաղահրապարակներ և կանաչապատ տարածքներ: ▪ Գյուղատնտեսական մթերքների շուկայի և առևտրա-արդյունաբերական ապրանքների տոնավաճառի բացակայություն: ▪ Սոցիալապես անապահով ընտանիքների, միայնակ թոշակառուների, ցածր եկամուտ ունեցողների հարաբերական մեծ թիվը համայնքում: ▪ Գործազրկության բարձր ցուցանիշը: ▪ Տուրիստական կենտրոնի բացակայություն ▪ Համայնքում տուրիզմի զարգացմանը նպաստող ժամանակակից ենթակառուցների բացակայություն ▪ Գյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակ ▪ Մաշված գյուղատնտեսական տեխնիկա
Հնարավորություններ	Սպառնալիքներ (վտանգներ)

<ul style="list-style-type: none"> ▪ Որակյալ աշխատուժի մեծ պոտենցիալ՝ տարբեր մասնագիտությունների բարձրագույն և մասնագիտական կրթությամբ կադրեր, որոնք կարող են կազմակերպել գյուղատնտեսության, կրթության ու դաստիարակության, մշակութային, շինարարական և այլ աշխատանքներ: ▪ Արդիական գյուղատնտեսության զարգացում ▪ Հիմնականում պահպանված նախադպրոցական, կրթական և մշակութային հիմնարկների տիպային շենքեր: 	<ul style="list-style-type: none"> ▪ Արտագաղթի աճ: ▪ Որակավորված մարդկային ռեսուրսների կորուստ՝ կապված արտագնա աշխատանքային միգրացիայի հետ: ▪ Քաղաքացիների անվճարունակության պատճառով գյուղատնտեսական նշանակության հողերի՝ համայնքին հետ հանձնում և դրանից բխող համայնքային եկամուտների (հողի հարկ և գույքահարկ) նվազում: ▪ Սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերից բնակչության արտագաղթ
---	---

2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

2.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ուրվագծվող տեսլականն է՝ *համայնքի բնակիչների համար բարեկեցիկ ապրելակերպ՝ կենցաղային և բնակարանային պայմաններով, փոքր և միջին արտադրական ձեռնարկությունների զարգացման գրավիչ գործարար միջավայր:*

Միսիանի համայնքի զարգացման ռազմավարական ծրագրի հեռահար նպատակն է ապահովել համայնքի կայուն և համաչափ զարգացումը մոտակա տարիների ընթացքում:

Համայնքի զարգացման ռազմավարությունը, այն է՝ շարունակական բարեփոխումների և միջոցառումային ծրագրերի միջոցով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, առողջ ապրելակերպի և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զբոսաշրջության զարգացման և ձեռնարկատիրական գործունեության համար գրավիչ: Ընտրվել է համայնքում առկա իրավիճակի, պոտենցիալի, ինչպես նաև ՈՒԹՀԱ(SWOT) վերլուծության արդյունքում:

Համայնքի զարգացման ծրագրի ռազմավարական նպատակներն են՝

1. Զարգացնել զբոսաշրջությունը,
2. Զարգացնել գյուղատնտեսությունը
3. Զարգացնել փոքր ու միջին ձեռնարկատիրությունը:

2.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- 1) Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման միջոցով համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թվի աճի ապահովում հետևյալ գործողությունների իրականացմամբ.
 - ✓ Ենթակառուցվածքների և հուսալիության բարելավման ճանապարհով ներդրումների ներգրավում
 - ✓ ՏԻՄ օրենքի լիազորությունների սահմաններում արտոնությունների տրամադրում՝ նոր աշխատատեղերի ստեղծման պարագայում
 - ✓ Տեղական տնայնագործական արտադրողների արտադրանքի ցուցադրություն-վաճառք փառատոների, տարբեր էքսպոնների ժամանակ
 - ✓ Ագրոբիզնեսի զարգացում՝ հատկապես գյուղական բնակավայրերում
 - ✓ Տեղական արտադրանքի գովազդում:
- 2) «Գույքի կառավարման ծրագրին» համապատասխան իրականացնել համայնքի գույքի և ֆինանսների կառավարումը:
- 3) Խթանել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումն ու հաստատություններ հաճախող երեխաների թվի աճը ապահովելով
 - ✓ նախակրթարանների մասնակի կամ ամբողջական նորոգում,
